



ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*

Կիլիկյան թագավորության ծաղկումը, ինչպես և նրա քաղաքական ու զինվորական հզորությունը զգալի չափով բացատրվում է նրանով, որ, ամենից հարմար միջագահին առևտրի կարավանային ճանապարհը դեպի Արևելք անցնում էր Կիլիկիայի վրայով:

Կիլիկյան ֆեոդալական թագավորության տնտեսության զարգացմանը և եռուն քաղաքական կյանքին համընթաց էր և այդ ժամանակաշրջանի ֆեոդալական մշակույթը:

Գիտնականները, գրողները, նկարիչները և վարպետները բոլոր Հայաստանից զանգվածաբար թափվում էին Կիլիկիա, որտեղ նրանք վայելում էին Ռոմիայիցների և անկախ ֆեոդալների հովանավորությունը: Անտվածաբանական և եկեղեցական-բանավիճալիք գրականության հետ զուգընթաց, որը պաշտպանում էր Հայ եկեղեցու հավատի ուսմունքը և դավանանքը ընդդեմ պապականության նկրտումների, Կիլիկիայում լայն չափով զարգանում էր նաև պատմական, բժշկական, իրավագիտական և գեղարվեստական գրականությունը: Ուշագրության արժանի են Կիլիկիայի թագավոր Զեթումի եղբոր՝ Սմբատի դատաստանագիրքը, որ կազմված է եղել 1265 թվականին և որտեղ ստացել է իր արտացոլումը Կիլիկյան ֆեոդալական հայ հասարակության գաղափարախոսությունը, և Վարդան Այբակցու «Առակների ժողովածուն» (13-րդ դար), որտեղ ստացել են իրենց արտացոլումը, գլխավորապես, քաղաքալիք ստորին խավերի

դժգոհությունը և բողոքը ընդդեմ հարստահարողների:

Կիլիկիայում զարգացավ առանձնահատուկ հայկական արվեստ, այսպես կոչված արևմտահայկական, որը ենթարկվել էր Բյուզանդիայի և Արևմտյան Եվրոպայի արվեստի զգալի ազդեցությանը: Կիլիկյան հայկական ձեռագրերը, որոնք ձևավորված են մանրանկարչական զարդանկարներով ու խիստ տարբերվում են իրենց ոճով բոլոր Հայաստանում ստեղծված մանրանկարներից, շատ հաճախ հասնում են այնպիսի վարպետության, որ կարող են դրվել համաշխարհային լավագույն մանրանկարների հետ միևնույն շարքում:

Սկսած 13-րդ դարի վերջից Կիլիկյան թագավորության դրությունը, ինչպես և բոլոր քրիստոնյա պետությունները, որոնք կազմվել էին Արևելքում եվրոպացիների կողմից, սկսեց արագ կերպով վատանալ: 1268—1291 թվականներին Եգիպտոսի բախրիստական մամլուք սուլթանները գրավեցին Անտիոքը և Սիրիայի քաղաքներն ու ամրոցները, որոնք պատկանում էին խաչակիրներին: Դառնալով հզոր Եգիպտական պետության հարևանը, Կիլիկյան Հայաստանը ենթարկվեց մամլուքների պարբերաբար իրկնվող ասպատակություններին: Երկիրը թուլացնում էին նաև ներքին կրոնական պառակտումները և պապի միջամտությունը Կիլիկյան Հայաստանի եկեղեցական գործերին:

14-րդ դարում սկսվեց Կիլիկյան թագավորության փլուզման ճգնաժամը: Մուսուլմանական պետությունները դժգոհ էին, որ

* Շարունակված ամսագրի 1956 թվականի N N VI-ից, VII-ից, VIII-IX-ից և XI-XII-ից:

Կիլիկյան թագավորները բարեկամական հարաբերություն էին պահպանում արևմուտյան պետությունների հետ և դիմում էին նրանց օգնության: Թողնված լինելով իր ուժերին, Կիլիկյան Հայաստանը՝ չկարողացավ մինակ դիմադրել հզոր մուսուլմանական պետություններին: Նրա վերջնական անկումը տեղի ունեցավ 1375 թվականին և Լևոն Հինգերորդը վերջին թագավորը, որը գերի էր տարվել Կահիրե, մեռավ Փարիզում 1393 թվականին:

12-րդ դարում, Կիլիկյան պետության ծաղկման շրջանում, վերածնվեց և ոտքի կանգնեց ավերակների միջից բուն Հայաստանը:

Սելջուկների հիմնած լայնածավալ պետությունը Երկար շապրեց: Ալփառալան սուլթանը (1063—1072 թ. թ.) և ապա Մելիք-Քահա սուլթանի (1072—1092 թ. թ.) խնդրեց ու տաղանդավոր վեզիր պարսիկ Նիզամ-ալ-Մուլքի ձգտումը՝ ստեղծել կենտրոնացված հզոր սելջուկյան պետություն, հաջողություն չունեցավ: Մելիք-Քահա հետո նրա որդիների միջև՝ սկսվեց ներքին կռիվ և սելջուկների մեծ պետությունը բաժանվեց անկախ և կիսանկախ առանձին պետությունների, որտեղ իշխում էին սելջուկյան թագավորության տարբեր ճյուղերը:

Սկսած 11-րդ դարի վերջից կենտրոնական և հարավային Հայաստանում հիմնավորվեցին մուսուլմանական ամիրայությունները՝ Շեղդադյանները Անիում և Շահի-Արմենները՝ իլաթում, ու ավելի մանր ամիրայություններ՝ Կարսում և Էրզրումում: Իսկ հայկական իշխանությունները պահպանվել էին, գլխավորապես, հյուսիս-արևելյան Հայաստանում, Ձորագետում, Տաշիրքում, Սյունիքում ու հարավային Հայաստանի լեռնային շրջաններում՝ Սասունում, Մոկքում և Ռշտունիքում:

Անթաղիվում է, որ դեռևս մինչև սելջուկների Հայաստանը գրավելը, արդեն գոյություն են ունեցել քուրդ և մուսուլման ֆեոդալներ, որոնք գտնվել են խոշոր հայ ֆեոդալների իշխանության տակ, եվ հենց նրանք, գլխավորապես, առաջ անցան և սկսեցին աչքի ընկնող դեր խաղալ Հայաստանում, որը ընկել էր սելջուկների իշխանության տակ:

Մելիք-Քահա և նրա տաղանդավոր վեզիր Նիզամ-ալ-Մուլքի ժամանակ հայկական մարզերում, որոնք քարուքանդ էին արվել նահապետական իշխանության և սելջուկների կողմից, հաստատվեցին կարգն ու ներքին անվտանգությունը: Ամենուրեք վերականգնվեցին քանդված ու ավերված տեղերը, և Հա-

յաստանի կուլտուր-տնտեսական դրուժյունը սկսեց լավանալ: Հայաստանի քաղաքները և շրջանները աճում ու զարգանում էին նաև Շեղդադյանների, Շահի-Արմենների և այլ մուսուլմանական ամիրաների իշխանության տակ, և այդ քաղաքների ու շրջանների բարեկեցությունը վերականգնվել էր դեռևս 12-րդ դարում:

Հայաստանում սելջուկների ու մուսուլմանական ամիրաների տիրապետության ժամանակաշրջանում հայկական քաղաքների և շրջանների մշակութային և տնտեսական կյանքի զարգացման համար ստեղծվել էր բոլորովին նոր իրադրություն:

Երբ սելջուկները տիրեցին Միջագետքին, Սիրիային և Փոքր Ասիային և Մերձավոր Արևելքում հիմնովին փոխվեց քաղաքական դրուժյունը, Հայաստանը դադարեց տնտեսական բուֆերի նշանակություն ունենալուց ու անմիջապես կորցրեց իր տեղը միջազգային առևտրում, որը նա գրավել էր Բագրատունյաց շրջանում: Խաչակրաց արշավանքները համաշխարհային առևտրի մեջ առաջացրին խոշոր փոփոխություններ և տեղաշարժեր: Գրավելով Սիրիայի առափնյա շրջանները և տիրելով գլխավոր նավահանգիստներին, խաչակիրները անմիջական հարաբերության մեջ մտան մուսուլմանական Արևելքի հետ և, այդպիսով, հյուսիսային առևտրական ճանապարհների նշանակությունը խիստ խախտվեց:

12-րդ դարում տարաճեցիկ առևտուրը Անիի, Կարսի և Էրզրումի վրայով թեև վերականգնվեց, բայց, ըստ երևույթին, այլևս չունեց այն չափերը, որին նա հասել էր Ռագրատունյաց շրջանում:

Մշակութային և տնտեսական աշխուժացումը Հայաստանի քաղաքներում, որը եղել է 12-րդ դարում, ըստ երևույթին սերտ կապ է ունեցել մուսուլմանական քաղաքների կյանքի ընդհանուր զարգացման հետ: Այդ քաղաքների մեծագույն մասը մինչև 12-րդ դարի վերջը եղել է մուսուլմանական ամիրաների իշխանության տակ, ըստ որում ամենամեծ քաղաքները՝ Դվինը, Անին, Կարսը, Էրզրումը, իլաթը եղել են Շեղդադյանների, Շահի Արմենների, Կարսի և Էրզրումի ամիրաների քաղաքական և տնտեսական կենտրոնները: Հասկանալի է, որ այդ ամիրայությունների մեջ պետք է հաստատվեին մշտական և աշխույժ հարաբերություններ և մշակութային ու տնտեսական սերտ կապ:

Քանակապես շատացած մուսուլմանության մշակութային-տնտեսական նշանակությունը Հայաստանում և Անդրկովկասում այդ ժամանակը (սելջուկյան արշավանքնե-

լից հետո) Կեղեկ է ավելի մեծ, քան նախորդ շրջանում: Ժողովրդական միջավայրում տեղի են ունեցել իրար կողքի ապրող քրիստոնյաների և մուսուլմանների փոխադարձ խորունկ փոխազդեցություններ, շնորհիվ համագործակցության և բարեկամական հարաբերությունների: Եվ հենց մուսուլմանական տիրապետության այդ ժամանակաշրջանում պարսկա-արաբական քաղաքակրթությունը լայնորեն մուտք է գործել Հայաստան և ունեցել է բացառիկ մեծ ազդեցություն տեղական մշակույթի ընդհանուր բնույթի վրա:

Անիի հնագիտական պեղումները հաստատում են, որ հենց 12-րդ դարից սկսած ճարտարապետական հուշարձանները կրում են իրանա-մուսուլմանական արվեստի ուժեղ ազդեցության ակնառու նշաններ: Անիի 12—13-րդ դարերի գեղարվեստական-արհեստագործական արդյունաբերության իրերը ևս, բացի տեղական առանձնահատկություններից, ունեն շատ բան ընդհանուր իրանի մշակույթի և արվեստի հետ: Մուսուլմանության ազդեցությամբ է բացատրվում նաև հայկական գրականության աշխարհիկ հոսանքը, որի սաղմերը առաջ էին եկել արդեն Բագրատունյաց շրջանում:

Սելջուկյան պետության թուլացման և կազմալուծման շրջանում ուժեղացավ վրացական Բագրատունիների թագավորությունը: Դեռևս 12-րդ դարում Դավիթ Շինողի (1089—1125 թ. թ.) ժամանակ, վրացիները, ենթարկելով իրենց իշխանությանը կովկասյան լեռնականներին, կազմակերպեցին զորեղ բանակ, գլխավորապես ղեկավարներից, որոնք այդ ժամանակ ապրում էին հյուսիսային Կովկասի տափաստաններում և կարճ ժամանակում ոչ միայն վերագրավեցին սելջուկների վերցրած վրացական շրջանները, այլև տարածեցին իրենց իշխանությունը հեռավոր շրջապատում, հարևան երկրների վրա: 1122 թվականին Դավիթ Շինողը հետ վերցրեց Վրաստանի հին մայրաքաղաք Թբիլիսին: 1123 թվականին, Անիի քաղաքացիների ներկայացուցիչների առաջարկությամբ, նա վերցրեց Անի քաղաքը և բերդը: Սակայն, Անիի ազատագրումը փերջնական չէր, և 1126 թվականին քաղաքը նորից գրավեցին Շեղդադյանները:

Դավիթի հաջորդները ոչ միայն պահեցին իրենց նվաճած շրջանների մեծ մասը, այլև ձեռք բերին նոր երկրամասեր: Գեորգի Երրորդի (1156—1184 թ. թ.) ժամանակ վրացական զորքերը Կերկորդ անգամ տիրեցին հայկական մայրաքաղաք Անիին: Վրաստանի ամենաբարձր հզորության շրջանն է հա-

մարվում Գեորգի Երրորդի դուստր Թամարայի (1184—1213 թ. թ.) թագավորության շրջանը: Նրա ժամանակ համարյա ամբողջ Հայաստանը գրավել էին Թամարայի զորավարները, Կերկու եղբայր հայ իշխաններ Զաքարի և Իվանե Մխարբրձեկիները (Երկայնաբազուկները): Այդ իշխանական տոհմի գերագույն տիրապետության տակ ֆեոդալական Հայաստանը նորից վերականգնվեց, իբրև Վրաստանի անկախ, վասալական շրջան: Երկայնաբազուկ եղբայրների գրաված շրջաններում առաջ եկան նոր հայկական իշխանություններ՝ Օրբելյանները, Վաչուգյանները, Պոռչյանները, Դուփյանները և ուրիշները, որոնք ստացան ընդարձակ կալվածներ, գլխավորապես Հայաստանի հյուսիս-արևելյան և կենտրոնական շրջաններում:

Բագրատունյաց թագավորության անկումը և Հայաստանի քաղաքական անկախության կորուստը չէին նշանակում հայկական մշակույթի վերջնական անկում: Նա շարունակում էր զարգանալ Հայաստանում առաջ եկած մուսուլմանական ամիրայություններում, և հասավ իր ծաղկման ամենաբարձր աստիճանին 13-րդ դարում՝ ֆեոդալական Հայաստանի քաղաքական վերածննդի ժամանակաշրջանում, վրացական հովանավորության տակ:

Մշակույթի այս նոր ծաղկումը զգալի չափով բացատրվում է նրանով, որ այդ ժամանակը նորից Կերկու եկան բարենպաստ իրադրություններ սեփական համաշխարհային առևտրի և Հայաստանի քաղաքների արագ զարգացման համար: Հենց այդ ժամանակը իտալական առևտրական հանրապետությունները՝ Վենետիկը և Զենովան, որոնք 13-րդ դարի սկզբից գլխավոր դեր էին խաղում Արևելքի հետ կատարվող համաշխարհային առևտրի մեջ, մշտական հարաբերություն հաստատեցին Սև ծովի նավահանգիստների ու միաժամանակ Հայաստանի հետ Տրապիզոնի վրայով:

Բուն Հայաստանի քաղաքները, որոնք սելջուկյան արշավանքներից հետո կապ էին հաստատել սեփական նավահանգստային քաղաքներում զորեղացած հայկական զաղութների հետ, նորից նշանակություն ստացան միջազգային առևտրում և զգալիորեն հարստացան: Ուստի դժվար չէ եզրակացնել, որ Հայաստանի նյութական և մշակութային աճը Երկայնաբազուկների իշխանական տոհմի տիրապետության շրջանում, ինչպես և ամենուրեք շինարարության նոր զարգացումը պայմանավորված են եղել արտաքին առևտրի հաջողություններով:

13-րդ դարի հրատարակված հուշարձանների արձանագրական նյութերից երևում է, որ տվյալ ժամանակաշրջանում հողատիրական ազնվականության ձեռքերում եղել են խոշոր դրամական հարստություններ: Ինչպես ցույց է տալիս Ն. Մառը, իբրև ազգային մշակութային սկզբունքների կրող, Անիում հանդես է գալիս այդ ժամանակներում քաղաքային հարուստ հայ բնակչությունը: Մառի վարժիքով, Անի քաղաքը, որ մնացած է եղել, իբրև հայկական մշակութային կենտրոն, եղել է այն բովի, ետրտեղ հայկական ֆեոդալիզմը իր հայրենիքում վերածվել է հայկական բուրժուական աշխարհի:

Քաղաքային կյանքի զարգացման հետևանքով մշակվեց և զարգացավ վերածնված ֆեոդալական Հայաստանում ճարտարապետության և արվեստի մեջ յուրահատուկ նորոճ, որը սերտ կապ ունի արևելյան իրանական-մուսուլմանական արվեստի հետ: Այդ նոր ոճը հանդիսանում է 13-րդ դարի, զգալի չափով զարգացած, քաղաքացիական ճարտարապետության և աշխարհիկ գեղարվեստական արհեստագործության բնորոշ առանձնահատկությունը: Բարձր ծաղկման աստիճանի հասավ այդ ժամանակաշրջանում նաև աշխարհիկ գրականությունը, գլխավորապես միջնադարյան հայկական քնարերգությունը, որն իրենից ներկայացնում է բացառիկ արժեք իր գեղարվեստական արժանիքներով: 7-րդ և 8-րդ դարերի հայկական գրականությունից մեզ հասել են, բացի այդ, պատմական, բժշկական և այլ գիտական երկեր, այդ թվում՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը, որը պարունակում է հայկական իրավունքի մի շարք նորմաներ և ծանոթացնում է մեզ այդ ժամանակվա ֆեոդալական իրավունքի մի քանի դժբերի հետ:

Հայաստանի զարգացմանը նոր, ծանր հարված հասցրեց 1236—1244 թվականների մոնղոլական արշավանքը, այն արշավանքը, որի հետևանքով Ռուսաստանում հաստատվեց թաթարական լուծը:

1239 թվականին մոնղոլական զորքերը Չարմաղանի առաջնորդությամբ վերցրին և ավերածության մատնեցին Անին և Կարսը: Մի քանի տարուց հետո, 1242—1244 թվականին, Չարմաղանի հաջորդ Բաշուն նույնպիսի հարվածներ հասցրեց հայկական բարձրակառուցված հարավ-արևմտյան քաղաքներին՝ Էրզրումին, Նիզակային ու Նուխին:

Սակայն, հայկական աղբյուրների հաղորդագրություններից երևում է, որ Հայաստանի կողմից կրված ցնցումները այդ արշա-

վանքների ժամանակ չեն եղել այնքան նրկարատև և սարսափելի, ինչպես սեղուկների արշավանքների ժամանակ: Հայաստանը ինքը կամովին հպատակվեց մոնղոլներին և նրա ֆեոդալական տիրակալները, ընդունելով մոնղոլների գերագույն իշխանությունը, պահել են ոչ միայն իրենց սեփականությունը, այլ, մասամբ, նաև ֆեոդալական իրավունքները:

Մոնղոլական արշավանքներից հետո Հայաստանում բնականոն կյանքը վերականգնվեց համեմատաբար արագ, և 13-րդ դարի երկրորդ կեսում Հայաստանում սկսվեց մշակութային և տնտեսական կյանքի նոր աշխուժացում, որի մասին վկայում են, ի միջի այլոց, հարուստ և շքեղ տաճարները և այլ կառույցները, որ ամենուրեք երևան են կան մոնղոլական տիրապետության առաջին շրջանում:

Պահելով Հայաստանում նրա ֆեոդալական կազմակերպությունը և թողնելով ֆեոդալներին նրանց նախկին իրավունքները և ունեցվածքը, մոնղոլները օգտագործեցին ֆեոդալական Հայաստանի տեղական վարչական կազմը և զինվորական ուժերը իրենց նվաճողական արշավանքներում ընդդեմ Բաղդադի խալիֆայության, մամլուքների սիրիական-եգիպտական պետության և Ռուկն հորդայի խաների:

Մոնղոլների քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանի վերաբերմամբ հիմնականում եղել է նման Ռուսաստանում նրանց վարած քաղաքականության. նրանք ամեն կերպ աշխատում էին թույլ չառն խոշոր ֆեոդալների զգալի զորեղացումը և խրախուսում էին իշխանական խմբերի մեջ տարակարծությունները: Հայաստանում, ինչպես և Ռուսաստանում հոգևորականությունը ազատված է եղել պետական տուրքերը վճարելուց ու մի շարք այլ պարտավորություններից: Մոնղոլները Երևանից համարում էին ազդեցիկ քաղաքական ուժ և նրան օգտագործում էին իրենց նպատակների համար:

Հայաստանի մշակութային և տնտեսական զարգացումը, թեև մոնղոլների տիրապետության առաջին շրջանում շարունակվում էր, սակայն ոչ այն թափով, ինչպես Վրաստանի և նրա ճորտ Երկաթաբաղրով իշխանների տիրապետության շրջանում: Երկրի բարեկեցության վրա բացասաբար էր ազդեցություն ունեցում մշակութային մշտական մասնակցությունը մոնղոլների արշավանքներին, բնակչությունից դանձալող բազմաթիվ լուծաբեր զորք բարձր հարկեր և ծանր պարհակները: Պարհակները և տուրքերը ճիշտ տրոշելու համար, մոնղոլները պարբերաբար

անց էին կացնում ազգաբնակչության մարդահամարը:

Մոնղոլների Հայաստան գալուց կարճ ժամանակից հետո Արևմուտքի հետ վերականգնվեցին միջազգային առևտրական հարաբերությունները, որոնք մոնղոլների տիրապետության ժամանակ ստացան զգալի զարգացում: Ամենից կարևոր ու նույնիսկ համաշխարհային առևտրական կենտրոններ դարձան Խուլազյան իշխանների մայրաքաղաք Թավրիզը և հյուսիս-արևմտյան Պարսկաստանում առաջացած նոր առևտրական կենտրոն Սուլթանիեն, որը շինված է եղել իշխան Արղունի (1284—1291 թ.թ.) և նրա հաջորդների ժամանակ:

Սակայն, չնայելով մոնղոլների ժամանակ տեղի ունեցած համաշխարհային առևտրի զարգացմանը, Հայաստանում, սկսած 13-րդ դարի վերջից նկատվում են տնտեսական անկում և Անի մայրաքաղաքի փլուզում: Այդ անկումը հետևանք է եղել լուրջ տնտեսական պատճառների:

Բյուզանդական-Սասանյան և Բագրատունիների դարաշրջաններում, մասամբ նաև նրկաթնաբաղուկ իշխանների ժամանակը միջազգային առևտրի կենտրոններ են եղել կենտրոնական և հյուսիս-արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքները. իսկ այժմ միջազգային առևտրի ու ապրանքափոխանակության կենտրոնական վայրը դարձել էր իշխանների մայրաքաղաք Թավրիզը և ապա՝ Սուլթանիեն: Մյուս կարևոր իրադրությունը հանդիսանում է զլխավոր կարավանային ճանապարհի փոխադրումը Անիից ու Կարսից դեպի հարավ, Այաշկերտի և Բասենի հովիտները և դեպի Արճեշ—Մամադկերտ: Հիշված հանդամանքների հետևանքով 13-րդ դարի վերջից սկսվեց Հյուսիսային Անդրկովկասի և կենտրոնական Հայաստանի քաղաքների նվազումն ու տնտեսական կյանքի աշխուժացումը հարավային Հայաստանի մուսուլմանական շրջաններում:

14-րդ դարի առաջին կեսից սկսած բուն Հայաստանի տնտեսական դրությունը խիստ վատացավ նաև ծանր հարկերի և մոնղոլական վարչական կազմի ու հարկահավաքների հարստահարությունների հետևանքով: Մոնղոլական վարձակալների գործունեությունը եղել է ծանր ժողովրդական աղետ, ինչպես ամենուրեք մոնղոլական պետության մեջ, ալանյան և Վրաստանում ու Հայաստանում: Ուստի և զարմանալի չէ, որ հայ գյուղացիներն ու քաղաքացիները զանգվածաբար թողնում էին իրենց հայրենի տեղերը և փախչում: Դրա մասին վկայում է մոնղոլական Աբու-Սալիհ խանի (1316—1335 թ.թ.) Անիի Մամուլի մզկիթի պատի

վրա փորագրված հրամանագիրը, բնակչությանը ապօրինի ու քաջայիշ հարկերից պաշտպանելու մասին: Այդ հրամանագրում կա պարզ ցուցում, որ հրամանագիրը հրատարակելու պահին Անի քաղաքը և Հայաստանի շրջանները սկսել էին դատարկվել: Անիի և մերձակա շրջանների բնակչությունը, սնանկացած լինելով անտանելի տուրքերից, թողնում էին իրենց տները և հեռանում Հայրենի երկրից:

Պարսկաստանում մոնղոլական դինաստիայի վերացումից ու Աբու-Սալիհից հետո, իշխանների ընդարձակ պետությունը կազմալուծվեց և բաժանվեց մի քանի մուսուլմանական տիրապետությունների:

Թավրիզին և անդրկովկասյան մարզերին տիրապետելու համար փոփոխակի պահանջ էին ներկայացնում նոր հանդես եկած Չոբանյանները և Զեյլախյանները, Ոսկե հորդայի խաները և Ղարա-դուշունյու ցեղի թուրքմենները:

Այդ խռովահույզ ժամանակները հայկական մարզերի պատմությունը իրենից ներկայացնում է քոչվոր ցեղերի, ամիրաների և այլ հավակնություն ունեցող խմբակցությունների երկպառակտությունների ու կռիվների անընդհատ շրջան, որոնց մասին մեզ հասել են միայն մոթ ու աղետ տեղեկություններ: Այդ կռիվների ընթացքում հայկական շրջանների նշավական դրությունը անընդհատ ընկնում էր:

14-րդ դարի վերջում Հայաստանի վրայով անցավ թուրք-մոնղոլական արշավանքների մի նոր ահեղ ալիք և վրա հասան Լանկթամուրի սուլթանի ժամանակները (1386—1387, 1395—1396, 1400—1403 թվականներին), երկրի բնակչության զանգվածային կոտորածներն ու անխնա ավերածությունները:

Լանկթամուրի մահվանից հետո նրա որդիները անկարող եղան պահել իրենց ձեռքում հոր լայնածավալ նվաճումները: 1407 թվականին Հայաստանին նորից տիրեցին Ղարա-դուշունյու ցեղի թուրքմենները, իսկ 1467 թվին Ղարա-դուշունյուների ղեկավար Զեհանշահի պարտությունից ու մահվանից հետո, Ղարա-դուշունյու թուրքմենները պետք է իրենց տեղը զիջեին մյուս թուրքմենական՝ Աղ-դուշունյու ցեղին, որի ղեկավարն էր Ուլուն-Հասանը:

Հայկական աղբյուրներից երևում է, որ հայկական շրջանների տնտեսական և մշակութային կյանքի երկարատև լճացումը և հետադիմությունը շարունակվեց նաև 15-րդ դարում: Ավերված հայկական շրջաններում բնիկ ազգաբնակչության տեղերը հետզհետե գրավեցին թուրքերը, քրդերը և թուրքմեն-

ները, իսկ հայերի արտագաղթը, գլխավորապես քաղաքի բնակիչների և ազգաբնակչության տիրող խավերի, գնալով ավելի սաստկացավ:

Մեծ շահերով նոսրացած հայ ազնվականությունը հետզհետե զրկվեց իր հողային կալվածներից: Այսպիսով, խորտակվում էր նրա ոչ միայն քաղաքական, այլև տնտեսա-

կան տիրապետությունը իր հայրենի հողերի և կալվածների վրա:

16-րդ դարի սկզբում Հայաստանը գրավեցին Սեֆյան պարսկաստանը և Օսմանյան թուրքերը, ու նրա ֆեոդալական ավերակների վրա հաստատվեցին այդ դորեզ մուսուլմանական պետությունների պետական ու նրանց ուրույն ֆեոդալական կարգերը:

